Ութերորդ դասարանի քննության

ՈՒՂԵՑՈՒՅՑ

սկսած 2018/2019 ուս. տարվանից

Քննության նախապատրաստման և անցկացման կանոնները

Կենտրոնական քննական հանձնաժողով
Վարշավա 2017

Ուղեցույցը մշակվել է Կենտրոնական քննական հանձաժողովի կողմից՝ հիմնվելով Ա բաժնում նշված իրավական ակտերի վրա:

Կենտորնական քննական հանձնաժողով
փող. Յուզեֆ Լևարտովսկու 6, 00-190 Վարշավա
Հեռ.՝ 22 536 65 00
Էլ. փոստ՝ sekretariat@cke.edu.pl

Խմբագրական կազմ՝
դ-ր Մարչին Սմոլիկ (ԿՔՀ)
Էդիտա Վաժեխա (ԿՔՀ)
Լյուդմիլա Ստոպինսկա (ԿՔՀ)
դ-ր Վիոլետա Կոզակ (ԿՔՀ)

Ա. ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ութերորդ դասարանի քննությունը անցկացվում է ըստ 1991թ. սեպտեմբերի 7-ին ընդունված կրթական համակարգի մասին օրենքի 44-րդ հոդվածի[1]: Առաջին անգամ քննությունը կանցկացվի 2018/2019 ուսումնական տարում:

Ութերորդ դասարանի քննության հետ կապված կոնկրետ հարցերը նշված են հետևյալ իրավական ակտերում:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ	ԿԱՐԳԱՎՈՐԵԼԻ ՀԱՐՑԵՐ
Ըստ 1991թ. սեպտեմբերի 7-ի կրթական համակարգի մասին օրենքի (Օրենքների տեղեկագիր 2016 թ. մաս 1943, հետ. լր.)	Ութերորդ դասարանի քննության անցկացման հիմնական կանոնակարգերը, այդ թվում քննական առարկաները, Ութերորդ դասարանի քննության անցկացման ձևը և պայմանները, չեղարկումը, վերահսկողությունը
Ազգային կրթության նախարարի 2017թ. Օգոստոսի 1-ի հրամանը՝ Ութերորդ դասարանի քննության մանրամասն պայմանների և անցկացման ձևի վերաբերյալ (Օրենքների տեղեկագիր 2017 թ., մաս 1512)	Ութերորդ դասարանի քննության անցկացմանը վերաբերվող կազմակերպչական և վարչական մանրամասն կարգավորումներ
Ազգային կրթության նախարարի՝ մանկապարտեզային դաստիարակության և միջնակարգ դպրոցի ընդհանուր կրթության ծրագրերի՝ այդ թվում թույլ կամ նշանակալի մտավոր հետամնացություն ունեցող աշակերտների, 1-ին աստիճանի մասնագիտական և հատուկ աշխատանքի նախապատրաստության դպրոցների ընդհանուր կրթության մասին 2017թ. փետրվարի 14-ի որոշումը (Օրենքների տեղեկագիր 2017 թ., մաս 356)	Տեղեկատվությունը և գիտելիքները նշող ընդհանուր և հատուկ պահանջներ, որոնց տիրապետումը ստուգվում է Ութերորդ դասարանի լեհերեն, մաթեմատիկա և օտար լեզու առարկաների քննությունների ընթացքում[2]

2018/2019 Ուսումնական տարվա Ութերորդ դասարանի քննությանը վերաբերող ուղեցույցները մշակվել են՝ հիմնվելով կրթական համակարգի մասին օրենքի 9ա (օրենք 2) հոդվածի
3-րդ կետի և 2016թ. դեկտեմբերի 14-ի օրենքի 267 հոդվածի մեջ ներառված դրույթների վրա: *Կրթության մասին օրենքի համապատասխան դրույթեր*[3].

[1] Տեքստը՝ օրենքների տեղեկագիր՝ 2016 թ. մաս 1943, հետագա լրացումներով
[2] Սկսած 2022 թ. նաև հետևյալ քննություններին՝ կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն և պատմություն (տե՛ս *Ուղեցույցի* Դ բաժինը).
[3] Օրենքների տեղեկագիր՝ 2017 r. մաս. 60, հետագա լրացումներով:

Բ. ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ութերորդ դասարանի քննությանը մասնակցում են՝

- տարրական/միջին դպրոցի ութերորդ դասարանի աշակերտները
- միջնակարգ դպոցի կրթական ծրագրով գործող գեղարվեստի դպրոցների աշակերտները – այն դասարանում, որտեղ կրթական ծրագիրը համապատասխանում է միջնակարգ դպրոցի ութերորդ դասարանի ծրագրին
- մեծահասակների համար նախատեսված միջնակարգ դպրոցների ունկնդիրները[4]

Ութերորդ դասարանի քննությունը պարտադիր է, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր աշակերտ պետք է դրան մասնակցի, որպեսզի ավարտի դպրոցը[5]: Նշված չէ նվազագույն գնահատական, որը աշակերտը պետք է ստանա, այդ իսկ պատճառով ութերորդ դասարանի քննությունը անհնար է ձախողել[6]:

Քննությունը իրականացնում է 2 հիմնական գործառույթներ՝

1. Ընդգծում է աշակերտների պարտադիր քննական առարկաների ընդհանուր ուսուցման մակարդակը և տեղեկացնում է աշակերտին, նրա ծնողներին, ուսուցիչներին և կրթական համակարգի ղեկավարությանը ուսուցման մակարդակի մասին:
2. Փոխարինում է ավագ դպրոցի ընդունելության քննությանը, որոնք օգտագործում են ութերորդ դասարանի քննության յուրաքանչյուր առարկայի գնահատականը՝ որպես ընդունելության չափանիշ, երբ դիմորդների թիվը գերազանցում է տվյալ դպրոցում եղած ազատ տեղերի քանակին[7]:

Գ. ՔՆՆԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ

1. Ութերորդ դասարանի քննությունը անցկացվում է 2 ժամկետներով՝ գլխավոր և լրացուցիչ: Տարբեր դպրոցներում քննությունը անցկացվում է ստորև սյունակում ներկայացված ամիսներին:

	Երեխաների և մեծահասակների դպրոցներ, որտեղ դասերն ավարտվում են գարնանային կիսամյակում	Մեծահասակների դպրոցներ, որտեղ դասերն ավարտվում են աշնանային կիսամյակում
Գլխավոր ժամկետ	ապրիլ	հունվար
Լրացուցիչ ժամկետ	հունիս	ապրիլ

---

[4] *Ուղեցույցում* օգտագործվող «աշակերտ» եզրույթը վերաբերում է և՛ աշակերտներին, և՛ ունկնդիրներին:

[5] Ութերորդ դասարանի քննությանը չի մասնակցում այն աշակերտը, ով ունի հատուկ ուսուցման անհրաժեշտության որոշում՝ տրված միջին կամ նշանակալի աստիճանի մտավոր հետամնացության կամ, երբ հաշմանդամությունից մեկը հանդիսանում է միջին կամ նշանակալի մտավոր հետամնացությունը:
Քննության մասնակցությունից կարող է ազատված լինել այն աշակերտը, ում համար կայացվել է որոշում՝ հատուկ կրթության անհրաժեշտության մասին և որը վերաբերում է այլ տեսակի հաշմանդամությանը, քան միջին կամ նշանակալի մտավոր հետամնացությունն է: Ազատման դիմումը Շրջանային Քննական Հանձնաժողովի տնօրենին են ներկայացնում աշակերտի ծնողները: Դիմումին պետք է կցել դպրոցի տնօրենի դրական կարծիքը:
Քննության մասնակցությունից կարող է ազատված լինել նաև այն աշակերտը, ով պատահարի կամ առողջական խնդրի պատճառով չի կարողացել մասնակցել ոչ՛ գլխավոր, ոչ՛ լրացուցիչ ժամկետների քննությանը:

[6] Ութերորդ դասարանի քննության արդյունքները չեն ազդում բարձր դասարան տեղափոխվելու հնարավորության վրա այն գեղարվեստի դպրոցներում, որտեղ միջնակարգ ընդհանուր կրթության ծրագիրը իրականացնելիս տարրական/միջին դպրոցի 8-րդ դասարանին համապատասխանող դասարանը վերջինը չի համարվում:

[7] Ավագ դպրոցի ընդունելության համար ութերորդ դասարանի քննության տոկոսային գնահատականների և միավորների հաշվարկումը կարգավորում է Կրթության նախարարի 2017 թ. մարտի 16-ի որոշման համաձայն: (Օրենքների տեղեկագիր 2017 թ. մաս 610):

2. Լրացուցիչ ժամկետի քննությանը կարող է մասնակցել աշակերտը, ով առողջական կամ այլ պատահական պատճառով չի մասնակցել գլխավոր քննությանը:
3. Ամեն ուսումնական տարում ութերորդ դասարանի քննությունը ընթանում է Ուղեցույցի Ա բաժնի իրավական ակտերում նշված անփոփոխ օրացույցի համաձայն:

ԺԱՄԿԵՏ	ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ
Ոչ ուշ, քան 2 տարի մինչ քննության ժամկետը	Կրթության նախարարը հանրային տեղեկագրում հրապարակում է՝ առարկայական օլիմպիադաների ցանկը, որոնք հաղթած կամ եզրափակիչ անցած աշակերտները ազատվում են տվյալ առարկայի քննությունից[8]:
Մինչև քննությանը նախորդող ուս. տարվա օգոստոսի 20-ը	Կենտրոնական քննական հանձնաժողովի տնօրենի (ԿՔՀ) կարգադրությամբ ինտերնետային կայքում հրապարակվող հանրային տեղեկագրում ներկայացվում է հաջորդ ուս. տարվա ութերորդ դասարանի քննության գրաֆիկը:
Մինչև սեպտեմբերի 10-ը	ԿՔՀ-ի տնօրենի կարգադրությամբ կայքի հանրային տեղեկագրում ներկայացվում են՝ • տեղեկություններ այն նյութերի և լրացուցիչ պարագաների մասին, որոնցից կարելի է օգտվել քննության ժամանակ, • հաղորդում քննության անցկացման պայմանների և ձևերի մասին, • տեղեկություններ տվյալ ուս. տարում քննության կազմակերպման և անցկացման մասին, այդ թվում՝ քննության անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերի օրինակներ:
Մինչև սեպտեմբերի 30-ը	Աշակերտի կամ ունկնդրի ծնողները դպրոցի տնօրենին են ներկայացնում գրավոր հայտարարություն, որում՝ • նշում են այն օտար լեզուն, որից աշակերտը կամ ունկնդիրը քննություն է հանձնելու, • նշում են ընտրովի առարկան (սկսած 2022 թ.), որից աշակերտը կամ ունկնդիրը քննություն է հանձնելու, • հայտնում են մաթեմատիկայի քննությանը (իսկ սկսած 2022 թ. նաև ընտրովի առարկայից) մասնակցության մտադրության մասին՝ համապատասխան ազգային և էթնիկ փոքրամասնության լեզվով կամ բարբառով (տե՛ս *Ուղեցույցի* «Է» բաժինը).
Մինչև հունվարի 15-ը (քննությունից 3 ամիս առաջ)[9]	Աշակերտի կամ ունկնդրի ծնողները մինչև սեպտեմբերի 30-ը դպրոցի տնօրենին կարող են գրավոր տեղեկացնել իրենց որոշման փոփոխության մասին:
Մինչև մարտի 30-ը (ոչ ուշ, քան քննությունից երկու շաբաթ առաջ)[9]	Առարկայական օլիմպիադայի հաղթող, եզրափակիչ անցած, ինչպես նաև մարզային կամ հանրապետական առարկայական մրցույթի հաղթող աշակերտները մինչև սեպտեմբերի 30-ը կարող են դպրոցի տնօրենի միջնորդությամբ ՇՔՀ-ի տնօրենին տեղեկացնել ներկայացված հայտարարության փոփոխության մասին: (տե՛ս *Ուղեցույցի* «Ը» բաժինը).

[8] 2019 թվականի 8-րդ դասասրանի տվյալ առարկայի քննությունից ազատող օլիմպիադաների հաղորդումը կհրապարակվի մինչև 2017 թ. սեպտեմբերի 1-ը (art. 300 ustawy z dnia 14 grudnia 2016 r. *Przepisy wprowadzające ustawę – Prawo oświatowe*).

[9] Ճշգրիտ ժամկետը կախված է տվյալ տարում քննության անցկացման ժամկետից և հայտարարվում է տվյալ ուս. տարվա *8-րդ դասարանի քննության կազմակերպման և անցկացման ձևի մասին ուղեցույցի մեջ*, որը հրապարակվում է ԿՔԸ-ի կայքում՝ հանրային տեղեկագրի բաժնում:

Ապրիլի երկրորդ կես	Քննության գլխավոր ժամկետ
Հունիսի առաջին կես	Քննության լրացուցիչ ժամկետ
Ուսումնական տարվա ավարտական օր	Դպրոցի տնօրենը աշակերտներին է հանձնում ութերորդ դասարանի քննության արդյունքների տեղեկանքները՝ վկայականների հետ միասին

Դ. ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

1. Ութերորդ դասարանի քննությունը անցկացվում է գրավոր:

2. 2019–2021 թվականներին ութերորդ դասարանցին կհանձնի քննություն պարտադիր երեք առարկաներից: Դրանք են՝

   ա. լեհերեն
   բ. մաթեմատիկա
   գ. օտար լեզու (ժամանակակից)

3. Սկսած 2022 թվականից ութերորդ դասարանցին կհանձնի քննություն պարտադիր չորս առարկաներից: Դրանք են՝

   ա. լեհերեն
   բ. մաթեմատիկա
   գ. օտար լեզու
   դ. հետևյալ ընտրովի առարկաներից մեկից՝ կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն կամ պատմություն:

4. Ութերորդ դասարանցին կարող է քննություն հանձնել հետևյալ օտար լեզուներից մեկից՝ անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն, ռուսերեն, ուկրաիներեն կամ իտալերեն: Աշակերտը կարող է ընտրել միայն այն լեզուն, որը սովորում է դպրոցում՝ պարտադիր կրթական դասավանդման շրջանակներում:

5. Ութերորդ դասարանի օտար լեզվի քննությունը անցկացվում է օտար լեզվի հիմնական կրթության մեջ նշված պահանջների համաձայն՝ II.1 տարբերակով:

Ե. ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1. Ութերորդ դասարանի քննությունը անցկացվում է 3 օրվա ընթացքում.
   - օր առաջին – լեհերենի քննություն, տևողությունը՝ 120 րոպե,
   - օր երկրորդ – մաթեմատիկայի քննություն, տևողությունը՝ 100 րոպե,
   - օր երրորդ – օտար լեզվի քննություն, իսկ 2022 թվականից սկսած նաև ընտրված առարկայից քննություն, որոնցից յուրաքանչյուրի տևողությունը կկազմի 90 րոպե[10]:
2. Ութերորդ դասարանի յուրաքանչյուր առարկայի քննության համար նախատեսված ժամանակի մեջ չի ներառվում այն ժամանակը, որը նախատեսված է աշակերտի կողմից պատասխանները քննական թերթիկ անցկացնելու ճշգրտության ստուգման համար (5 րոպե):
3. Յուրաքանչյուր առարկայի քննությունը սկսվում է ութերորդ դասարանի քննության անցկացման ժամանակացույցում հաստատված ժամին: Այդ ժամանակացույցը հայտարարվում է Կենտրոնական քննական հանձնաժողովի ինտերնետային կայքում մինչև քննության ուս. տարվան նախորդող ուս. տարվա օգոստոսի 20-ը:

[10] Յուրաքանչյուր առարկայի քննության տևողությունը կարող է երկարացվել այն աշակերտների համար, որոնց համար նախատեսված է քննության պայմանների հեշտացում:

4. Յուրաքանչյուր առարկայի քննությունը իրականացնում է վերահսկիչ խումբը:

խմբում ուսուցիչների քանակը	առնվազն 2 (կախված տվյալ քննասենյակում գտնվող աշակերտների թվից)
խմբի կազմը	նվազագույնը 1 ուսուցիչ այլ դպրոցից
խմբում չընդգրկված անձինք	այն առարկայի ուսուցիչները, որի քննությունն է անցկացվում

5. Քննության ընթացքի մանրամասն նկարագրությունը գտնվում է *Ութերորդ դասարանի քննության կազմակերպման և անցկացման ձևի մասին Ուղեցույցի* մեջ, որը ամեն տարի հրապարակվում է (մինչև սեպտեմբերի 10-ը) ԿՔՀ-ի կայքի հանրային տեղեկագրում: Ամեն առարկայի համար նախատեսված քննական հարցաթերթիկի լրացման մասին մանրամասն տեղեկությունները գտնվում է քննական հարցաթերթիկի առաջին էջում:

6. Յուրաքանչյուր քննության ընթացքում ամեն աշակերտ նստում է առանձին սեղանի մոտ: Սեղանի վրա կարող են գտնվել բացառապես հարցաթերթիկը, ԿՔՀ-ի տնօրենի կողմից նախապես հայտարարված թույլատրելի նյութերը և լրացուցիչ պարագաները, իսկ հիվանդ կամ հաշմանդամ երեխաների դեպքում՝ դեղեր և այլ անհրաժեշտ պարագաներ:

7. Քննասենյակ չի կարելի բերել կամ ներսում օգտվել, ոչ մի հեռահաղորդակցման սարք, օրինակ՝ բջջային հեռախոս, mp3 նվագարկիչ, «խելացի» (սմարթ) ժամացույց: Վերոնշյալ կանոնի խախտման դեպքում տվյալ առարկայի քննության արդյունքները անվավեր կճանաչվեն (տե՛ս *Ուղեցույցի* «Ժ» բաժինը):

8. Քննության ընթացքում աշակերտը կարող է լքել քննասենյակը հարգելի պատճառներով՝ վերահսկիչ խմբի ղեկավարի թույլտվությունը ստանալուց և կողմնակի անձանց (բացառությամբ բուժօգնության աշխատակիցների) հետ կապի հաստատման հնարավորության բացառման դեպքում:
9. Վերահսկիչ խմբի անդամները չեն կարող աշակերտին քննական առաջադրանքի մասին պարզաբանումներ տալ: Չեն կարող նաև որևիցե կերպ մեկնաբանել քննական առաջադրանքը:

10. Աշակերտի քննությունը տվյալ առարկայից կարող է անվավեր համարվել, եթե՝
    - հաստատվի, որ առաջադրանքների լուծումը ինքնուրույն չի կատարվել, կամ
    - խախտվել է քննության ընթացքը, կամ
    - քննասենյակ են բերվել այլ նյութեր և լրացուցիչ պարագաներ, քան նշված է ԿՔՀ-ի տնօրենի կողմից նախապես հայտարարված ցանկում:

Զ. ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Բաց առաջադրանքների լուծումները ստուգում և գնահատում են շրջանային քննական հանձնաժողովի տնօրենի կողմից նշանակված քննողները:

2. Քննողները բոլորի համար կիրառում են միանման գնահատման կանոններ:

3. Փակ առաջադրանքների լուծումները ստուգվում են էլեկտրոնային սարքավորումների օգնությամբ (քննական թերթիկի էլեկտրոնային վերծանող սարք):

4. Ամեն առարկայի քննության արդյունքը ներկայացվում է տոկոսային և սանդղակային հարաբերությամբ
   - Տոկոսային արդյունքը դա միավորների չափն է (կլորացված ամբողջական թիվ), որոնք աշակերտը ստացել է հարցաթերթիկում ներառված առաջադրանքների լուծման համար: Օրինակ՝ եթե մաթեմատիկայի առաջադրանքի լուծման համար ստացել է 50 հնարավորից 39 միավոր, ապա ստանում է 78% գնահատական:
   - Սանդղակային գնահատականը դա աշակերտների քանակի տոկոսն է (կլորացված ամբողջական թվի), ովքեր տվյալ առարկայից ստացել են նույն գնահատականը կամ տվյալ աշակերտի գնահատականից ցածր գնահատական: Օրինակ՝ եթե աշակերտի մաթեմատիկայի սանդղակային գնահատականը 82 է, ապա դա նշանակում է, որ ութերորդ դասարանի մաթեմատիկայի քննությանը մասնակցած բոլոր աշակերտների 82%-ը առաջադրանքների լուծման համար ստացել է իր ստացած գնահատականից կամ ստացել է ավելի ցածր գնահատական, իսկ մնացած 18%-ը ստացել են ավելի բարձր գնահատական:
5. Ութերորդ դասարանցու տվյալ առարկայի տոկոսային գնահատականը որոշում է Շրջանային քննական հանձնաժողովի տնօրենը, իսկ սանդղակային գնահատականը՝ Կենտրոնական քննական հանձնաժողովը:

6. Շրջանային քննական հանձնաժողովի տնօրենի կողմից նշանակված գնահատականը չի կարող բողոքարկվել դատական ճանապարհով:

7. Ութերորդ դասարանի քննության արդյունքների տեղեկանքում ամեն աշակերտ գնահատականներ կստանա՝
   - լեհերենի քննությունից,
   - մաթեմատիկայի քննությունից,
   - օտար լեզվի քննությունից,
   - ընտրովի առարկայի քննությունից (սկսած 2022 թ.):

Է. ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ և ԷԹՆԻԿ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎՈՎ և ԲԱՐԲԱՌՈՎ

1. Այն դպրոցների կամ դպրոցների մասնաճյուղերի աշակերտները, որտեղ դասերը անցկացվում են ազգային և էթնիկ փոքրամասնությունների լեզվով կամ բարբառով, լուծում են մաթեմատիկայի առաջադրանքները, իսկ սկսած 2022 թ. նաև հետևյալ ընտրովի առարկաներից մեկից՝ կենսաբանությունից, քիմիայից, ֆիզիկայից, աշխարհագրությունից կամ պատմությունից՝ լեհերենով կամ տվյալ ազգային կամ էթնիկ փոքրամասնության լեզվով կամ բարբառով:

2. Աշակերտի ծնողները քննությանը մասնակցելու մտադրության մասին համապատասխան գրավոր ծանուցումը պետք է ներկայացնեն մինչև քննության անցկացման ուսումնական տարվա սեպտեմբերի 30-ը (Բաժին Գ):

Ը. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԿԱՄ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՍԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Աշակերտը, ով եղել է առարկայական օլիմպիադայի հաղթող կամ եզրափակչի մասնակից կամ հաղթել է մարզային կամ հանրապետական առարկայական մրցույթ, այն առարկայից, որը ներառված է ութերորդ դասարանի քննության առարկաների ցանկում, ազատված է այդ առարկայի քննությունից:

2. Ութերորդ դասարանի քննության ցանկում ներառված առարկայի կամ առարկաների օլիմպիադաների ցանկը, որը հաղթողներին և եզրափակչի մասնակիցներին ազատում է տվյալ առարկայի քննությունից, հայտարարում է Կրթության նախարարը՝ Հանրային տեղեկագրի հրապարակման միջոցով (MEN)[11]:

3. Քննությունից ազատված աշակերտի ութերորդ դասարանի քննության արդյունքների տեղեկանքի մեջ, տվյալ առարկայի քննության բաժնում նշվում է համապատասխանաբար «ազատված» բառը, ինչպես նաև առավելագույն՝ 100% (տոկոսային) և „100” (սանդղակային) գնահատականը[12]:

4. Աշակերտը, ով հաղթել է մարզային կամ հանրապետական առարկայական մրցույթը, օտար լեզվի օլիմպիադայի հաղթող կամ եզրափակչի մասնակից է կամ լրացուցիչ առարկայի հաղթող է (սկսած 2022 թ.), ում համար քննությանը մասնակցելու վերաբերյալ մինչև սեպտեմբերի 30-ը ներկայացված հայտի մեջ այդ առարկան տեղ չի գտել, կարող է փոխել հայտի մեջ նշված առարկան/առարկաները այն առարկայով/առրականներով, որոնցից ճանաչվել է հաղթող: Շրջանային քննական հանձնաժողովին այդ մասին տեղեկացնում է դպրոցի տնօրենը՝ աշակերտի կամ ունկնդրի ծնողների դիմումի համաձայն, սակայն ոչ ուշ քան քննությունից 2 շաբաթ առաջ: Օտար լեզուն կարող է փոխարինվել միայն այն լեզվով, որը աշակերտը սովորել է պարտադիր կրթական ծրագրի շրջանակներում:

Թ. ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ և ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ 165 ՀՈԴՎԱԾԻ 1 ՄԱՍՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՆՁԱՆՑ (ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԻ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Հատուկ կրթական կարիքներով այդ թվում՝ հաշմանդամ, ոչ լիարժեք, հասարակության համար վտանգ ներկայացնող և Կրթության մասին օրենքի 165-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձինք[13] մասնակցում են Ութերորդ դասարանի քննությանը՝ ըստ ընդհանուր գրաֆիկի և գործող քննական պահանջների կամ իրենց հարմարեցված ձևով:

---

[11] 2018/2019 ուս.տարվա տեղեկագիրը հասանելի է հետևյալ հասցեով՝ https://bip.men.gov.pl/wp-content/uploads/sites/2/2017/ 04/tresc-komunikatu.pdf

[12] Ը.1. և Ը.3 կետերում նշված լիազորություններից կարող են նաև օգտվել նախկին 6-ամյա տարրական դպրոցի և միջին դպրոցի այն աշակերտները, ովքեր եղել են առարկայական օլիմպիադայի հաղթող կամ եզրափակչին մասնակից կամ հաղթել են մարզային կամ հանրապետական առարկայական մրցույթ 8-րդ դասարանի քննությունում ներառված առարկաներից որևէ մեկից (2016 թ. դեկտեմբերի 14-ի «Կրթության մասին օրենքի» 299 և 301 հոդվածներ):

[13] Օրենքների տեղեկագիր՝ 2017 թ.. մաս 59, հետագա լրացումներով:

2. Քննության պայմանների հարմարեցումը կամ անցկացման ձևը գործում է հետևյալ աղյուսակում նշված փաստաթղթերի հիման վրա:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ	ԱՇԱԿԵՐՏՆԵՐ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ՁԵՎԸ
ա) Որոշում հատուկ կրթության կարիքի մասին	• վատ լսող և խուլ, • վատատես և կույր, • շարժողական հաշմանդամությամբ, • աֆազիայով, • թույլ մտավոր հետամնացությամբ, • աուտիզմով, այդ թվում ասպերգերի համախտանիշով, • հանրության ոչ լիարժեք համապատասխանությամբ և հասարակության համար վտանգ ներկայացնող աշակերտները:
բ) Տեղեկանք բժշկից՝ առողջական վիճակի մասին	• ձեռքերի ժամանակավոր անշարժությամբ, • քրոնիկ հիվանդություններով, ժամանակավոր հիվանդ կամ հաշմանդամ աշակերտները:
գ) Մանկավարժական խորհրդի գնահատական	• ովքեր ունեն վնասվածքներ կամ գտնվում են կրիտիկական վիճակում, • ովքեր նախկինում ապրելով օտար երկրում ունեն հարմարվելու խնդիրներ, • խոսակցական խանգարումներով, • որոնց մասին նշված է Կրթության մասին օրենքի 165-րդ հոդվածի 1-ին մասում (օտարերկրացիներ) աշակերտները:
դ) Հոգեբանա-մանկավարժական այդ թվում մասնագիտական կլինիկայի գնահատական	• Սովորելու որոշակի խնդիրներ ունեցող, օրինակ՝ դիսլեքսիայով, դիսգրաֆիայով, դիսօրթոգրաֆիայով, դիսկալկուլիայով, • խոսակցական խանգարումներով աշակերտները:
ե) Անհատական ուսուցման մասին որոշում	քրոնիկ հիվանդություններով աշակերտները:

3. Բժշկի տեղեկանքը կամ հոգեբանա-մանկավարժական կլինիկայի գնահատականը պետք է ներկայացնել դպրոցի տնօրենին ոչ ուշ քան մինչև հոկտեմբերի 15-ը: Եթե փաստաթուղթը ձեռք է բերվել այդ օրվանից հետո, ապա անհրաժեշտ է անհապաղ ներկայացնել այն:

4. Ութերորդ դասարանի քննության պայմանների կամ ձևի հարմարեցումը տվյալ աշակերտի կարիքներին և հնարավորություններին որոշում է մանկավարժական խորհուրդը՝ այն ընտրելով ԿՔՀ-ի տնօրենի հաղորդման մեջ նշված տարբերակներից: Այդ հաղորդումը հրապարակվում է մինչև քննության անցկացման ուս. տարվա սեպտեմբերի 10-ը:

5. Տնօրենը կամ նրա կողմից լիազորված ուսուցիչը պարտավոր է մինչև սեպտեմբերի 30-ը տեղեկացնել ծնողներին՝ քննության անցկացման պայմանների և ձևի հարմարեցման հնարավոր տարբերակների մասին: Մինչև նոյեմբերի 20-ը դպրոցի տնօրենը աշակերտի ծնողներին գրավոր տեղեկացնում է մանկավարժական խորհրդի կողմից աշակերտին հատկացված քննության պայմանների և ձևի հարմարեցման մասին: Եթե քննության պայմանների և ձևի հարմարացման անհրաժեշտությունը առաջանա նոյեմբերի 20-ից հետո, ապա տնօրենը պետք է անմիջապես տեղեկացնի

աշակերտի ծնողներին և շրջանային քննական հանձնաժողովի տնօրենին մանկավարժական խորհրդի ներկայացրած հարմարեցման պատճառների մասին:

6. Աշակերտի առողջական վիճակից կամ հաշմանդամությունից բխող հատուկ իրավիճակներում և շրջանային քննական հանձնաժողովի տնօրենի համաձայնությամբ քննությունը կարող է անցկացվել այլ վայրում՝ օրինակ աշակերտի տանը: Այս հարցով դիմումը ներկայացնում է դպրոցի տնօրենը՝ աշակերտի ծնողների հետ նախնական համաձայնեցումից հետո՝ մինչև հունվարի 15-ը:

7. Քննության մասնակցությունը համաձայն մանկավարժական խորհրդի որոշած պայմանները ապահովում է քննող խմբի ղեկավարը:

Ժ. ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ ՏՎՅԱԼ ԱՌԱՐԿԱՅԻՑ

1. Քննության ընթացքում աշակերտը պարտավոր է ինքնուրույն լուծել քննական թերթիկում ներառված առաջադրանքները՝ մասնավորապես կազմել սեփական տեքստը կամ առաջադրանքների լուծման եղանակները:

2. Ութերորդ դասարանի քննությունը տվյալ առարկայից կարող է չեղարկվել (անվավեր համարվել):

3. Չեղարկումը կարող է տեղի ունենալ՝
   - Քննության ընթացքում, կամ
   - Քննությունից հետո, եթե հարցաթերթիկի ստուգման ընթացքում հայտնաբերվի աշակերտի կողմից առաջադրանքի կամ առաջադրանքների ոչ ինքնուրույն լուծում:

4. Քննության ընթացքում չեղարկում կարող է կատարվել, եթե աշակերտը՝
   - քննական առաջադրանքները լուծում է ոչ ինքնուրույն,
   - քննասենյակ է բերել հեռահաղորդակցության որևէ սարք կամ քննասենյակում օգտվում է նման սարքից,
   - քննասենյակ է բերել ԿՔՀ-ի տնօրենի կարգադրության համաձայան նախատեսված նյութերի և լրացուցիչ սարքավորումների ցուցակի մեջ չնշված նյութեր կամ լրացուցիչ սարքեր,
   - խանգարում է քննության բնականոն ընթացքը՝ խոչնդոտելով այլ աշակերտների աշխատանքը:

5. Քննության ընթացքում չեղարկման որոշումը կայացնում է քննական հանձնաժողովի ղեկավարը (սովորաբար դպրոցի տնօրենը):

6. Չեղարկումը հարցաթերթիկի ստուգման ընթացքում տեղի է ունենում՝ աշակերտի կողմից հարցաթերթիկում ներառված առաջադրանքների ոչ ինքնուրույն լուծման հայտնաբերման դեպքում, մասնավորապես երբ աշակերտի աշխատանքի մեջ հայտնաբերվում են նմանատիպ ձևակերպումներ, որոնք վկայում են, որ՝
   - լուծումները փոխանցվել են այլ աշակերտի,
   - օգտվել է մեկ այլ աշակերտի կատարած լուծումներից,
   - քննության ընթացքում օգտվել է անթույլատրելի նյութերից, օրինակ՝ գրքի արտագրությունից, սեղմագրից կամ ինտերնետային կայքից,
   - արտագրված է հարցաթերթիկում ներառված տեքստի որևէ մաս:

7. Հարցաթերթիկի ստուգման ընթացքում չեղարկման որոշումը կայացնում է շրջանային քննական հանձնաժողովի տնօրենը կամ Կենտրոնական քննական հանձնաժողովի տնօրենը:

8. Ութերորդ դասարանի տվյալ առարկայի քննությունից չեղարկման կարգի մասին մանրամասն տեղեկություններ են տրված *Ութերորդ դասարանի քննության կազմակերպման և անցկացման ձևի մասին ուղեցույցում*, որը գործում է տվյալ ուս. տարում և հրապարակված է ԿՔՀ-ի կայքի Հանրային տեղեկագրի մեջ: Աշակերտի կողմից առաջադրանքի կամ առաջադրանքների ոչ ինքուրույն լուծման դեպքում տվյալ առարկայից քննության չեղարկման հնարավոր գործընթացները ներկայացված են ստորև բերված նկարում: Այդ գործընթացները նշված են համապատասխանաբար սև և կարմիր սլաքներով:
   - Սև սլաքներով նշված գործընթացը – ներկայացնում է հաջորդական քայլերը, երբ դպրոցի տնօրենը հնարավորություն ունի տեղեկացնել աշակերտի ծնողներին տվյալ առարկայի քննությունը չեղարկելու ՇՔՀ տնօրենի մտադրության մասին:
   - Կարմիր սլաքներով նշված գործընթացը – ներկայացնում է հաջորդական քայլերը, երբ դպրոցի տնօրենը չունի հնարավորություն տեղեկացնելու վերոնշյալի մասին աշակերտի ծնողներին:

9. Ութերորդ կետում նշված *տեղեկատվության* համաձայն աշակերտի կամ նրա ծնողների համար հասանելի են բոլոր անհրաժեշտ ձևանմուշները, եթե աշակերտի համար կիրառվում է տվյալ առարկայի քննությունը չեղարկելու գործընթացը:

10. Գլխավոր ժամկետում տվյալ առարկայի քննության չեղարկման դեպքում անհրաժեշտ է մասնակցել տվյալ առարկայի քննությանը լրացուցիչ ժամկետում:

11. Լրացուցիչ ժամկետում տվյալ առարկայի քննության չեղարկման դեպքում աշակերտը ստանում է «0%» գնահատական տվյալ առարկայից:


Քննողը պնդում է,որ աշակերտը ինքնուրույն չի լուծել առաջադրանքը կամ առաջադրանքները և այդ մասին տեղեկացնում է ՇՔՀ
ՇՔՀ-ն քննում է տեղեկատվությունը
ՇՔՀ-ի տնօրենը համաձայն է քննողի պնդմանը
ՇՔՀ-ի տնօրենը համաձայն չէ քննողի պնդմանը
ՇՔՀ-ի տնօրենը դպրոցի տնօրենի միջոցով գրավոր տեղեկացնում է աշակերտին կամ նրա ծնողներին տվյալ քննությունը չեղարկելու մտադրության մասին
Դպրոցի տնօրենը անհապաղ տեղեկացնում է այդ մասին աշակերտին կամ նրա ծնողներին.
Դպրոցի տնօրենը ի վիճակի չէ փոխանցել տեղեկությունը աշակերտին կամ նրա ծնողներին
Դպրոցի տնօրենը փոխանցում է տեղեկությունը ՇՔՀ տնօրենին
2 աշխատանքային օր տեղեկությունը ստանալուց հետո
Աշակերտը կամ նրա ծնողները դիմում են ՇՔՀ տնօրենին՝ փաստաթղթերի վերանայման համար
Աշակերտը կամ նրա ծնողները չեն դիմում ՇՔՀ տնօրենին՝ փաստաթղթերի վերանայման համար
Դպրոցի տնօրենից տեղեկությունը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում
Առավելագույնը 7 օր՝ դիմումը ստանալուց հետո
14 օր՝ դիմումի ներկայացման ժամկետը լրանալուց հետո
ՇՔՀ տնօրենը թույլատրում է ծանոթանալ փաստաթղթերինև ներկայացնել պարզաբանում
Առավելագույնը 7 օր՝ դիմումը ստանալուց հետո
ՇՔՀ տնօրենը հրաժարվում է չեղարկման մտադրությունից
ՇՔՀ տնօրենը հաստատում է մտադրությունը և չեղարկում տվյալ քննությունը
ՇՔՀ տնօրենը (դպրոցի տնօրենի միջնորդությամբ) գրավոր տեղեկացնում է աշակերտին կամ նրա ծնողներին չեղարկման մասին և ներկայացնում հիմնավորում
Փաստաթղթերին ծանոթանալուց և պարզաբանում ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
3 աշխատանքային օր՝ չեղարկման մասին տեղեկանալուց հետո
Աշակերտը կամ նրա ծնողները՝ ՇՔՀ տնօրենի միջոցով, կարող են ԿՔՀ տնօրենին ներկայացնել բողոք՝ ՇՔՀ տնօրենի վերաբերյալ
ՇՔՀ տնօրենը հետ է կանգնում չեղարկումից
7 օր՝ ՇՔՀ-ից բողոքը ստանալուց հետո
ԿՔՀ տնօրենը կայացնում է վեջնական որոշում: Որոշումը չի կարող վերանայվել վարչական դատարանում:

Ի. ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔՆԵՐ

1. Եթե աշակերտի կամ նրա ծնողների կարծիքով Ութերորդ դասարանի քննության ընթացքում չեն պահպանվել անցկացման կանոնները, աշակերտը կամ նրա ծնողները կարող են տվյալ քննության ավարտից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ՇՔՀ-ի տնօրենին ներկայացնել գրավոր բողոք:

2. Քննության անցկացման կարգի խախտման վերաբերյալ բողոքի ներկայացման մասին մանրամասն տեղեկությունները ներառված են *Ութերորդ դասարանի քննության կազմակերպման և անցկացման ձևի մասին ուղեցույցում*, որը ուժի մեջ է տվյալ ուս. տարում և հրապարակված է ԿՔՀ-ի կայքում՝ Հանրային տեղեկագրի բաժնում: Քննության անցկացման կարգի խախտման վերաբերյալ աշակերտի կամ նրա ծնողների կողմից ներկայացված բողոքի չեղարկման դեպքում հետագա քայլերի սխեման ներկայացված է ստորև բերված նկարում:

3. Երկրորդ կետում նշված *տեղեկատվության* համաձայն աշակերտի կամ նրա ծնողների համար հասանելի են բոլոր անհրաժեշտ ձևանմուշները, եթե աշակերտը կամ նրա ծնողները ցանկանում են քննության անցկացման կարգի խախտման վերաբերյալ բողոքներ կայացնել:



L. ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ և ՍՏԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԴԻՄՈՒՄ

1. Աշակերտը կամ նրա ծնողները իրավունք ունեն ծանոթանալու տվյալ աշակերտի ստուգված և գնահատված հարցաթերթիկին՝ շրջանային քննական հանձնաժողովի տնօրենի կողմից նշված վայրում և ժամին՝ շրջանային քննական հանձնաժողովի կողմից քննությունների արդյունքների տեղեկանքի հանձնման օրվանից 6 ամսյա ժամկետում:

2. Քննական հարցաթերթիկի վերանայման դիմումը ներկայացվում է համապատասխան շրջանային քննական հանձնաժողովի տնօրենին: Դիմումը կարող է ներկայացնել անձամբ աշակերտը կամ նրա ծնողները, ինչպես նաև այն կարող է ուղարկվել ԿՔՀ էլեկտրոնային եղանակով, ֆաքսով կամ փոստով:

3. Դիմումի նմուշը հասանելի է *Ութերորդ դասարանի քննության կազմակերպման և անցկացման ձևի մասին ուղեցույցում,* որը հրապարակվում է ԿՔՀ-ի կայքի Հանրային տեղեկագրի բաժնում:

4. ՇՔՀ-ի տնօրենը, հնարավորության դեպքում, համաձայնեցնելով աշակերտի ծնողների հետ, նրանց դիմումը ստանալուց հետո առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում, նշանակում է հարցաթերթիկին ծանոթանալու ժամկետ (օր և ժամ): Նշանակված ժամկետի մասին հանձնաժողովը տեղեկացնում է աշակերտին կամ նրա ծնողներին:

5. ՇՔՀ-ի տնօրենը նշանակում է նաև հարցաթերթիկին ծանոթանալու վայրը: Աշակերտի հաշմանդամությունից բխող որոշ իրավիճակներում ՇՔՀ-ի տնօրենը կարող է համաձայնել կազմակերպել և անցկացնել հարցաթերթիկին ծանոթանալը շրջանային քննական հանձնաժողովի գրասենյակից դուրս մեկ այլ վայրում:

6. Հարցաթերթիկին ծանոթանալու կանոնները՝
   - *Հարցաթերթիկին ծանոթանալու համար լիազորված լինելու հաստատումը:* Հարցաթերթիկին ծանոթանալու համար անհրաժեշտ է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, օրինակ՝ դպրոցական կամ նույնականացման քարտերով (ծնողների կամ չափահաս ուսանողների դեպքում):
   - *Հարցաթերթիկին ծանոթանալու ձևը:* Աշակերտին կամ նրա ծնողներին հարցաթերթիկը ներկայացվում է այն տեսքով, ինչպեսին հանձնել է աշակերտը և ստուգվել է քննողի կողմից: Քննողի անձնական տվյալները պաշտպանված են և հասանելի չեն հարցաթերթիկին ծանոթանալու ժամանակ:
   - *Հարցաթերթիկին ծանոթանալու տևողությունը:* ՇՔՀ-ի տնօրենի կողմից նշանակված մեկ հարցաթերթիկին ծանոթանալու նվազագույն տևողությունը 30 րոպե է: Հարցաթերթիկին ծանոթանալու համար լիազորված անձի խնդրանքով ՇՔՀ-ի տնօրենի նշանակած ժամանակը կարող է երկարացվել, եթե դա հնարավոր է՝ կախված տվյալ օրվա գրաֆիկից:
   - *Հարցաթերթիկին ծանոթանալու ընթացքում ներկա անձինք:* Հարցաթերթիկին ծանոթանալու ժամանակ ներկա է լինում շրջանային քննական հանձնաժողովի աշխատակիցը:
   - *Առաջադրանքների լուծումների գնահատման կարգը:* Հարցաթերթիկին ծանոթանալու ընթացքում աշակերտին կամ նրա ծնողներին տրվում է հնարավորություն՝ ծանոթանալու առաջադրանքների լուծումների գնահատման կարգին:
   - *Հարցաթերթիկին ծանոթանալու ընթացքը:* Աշակերտի անձնական տվյալները ստուգելուց հետո հարցաթերթիկին ծանոթանալու գործողությունը անցկացնող

անձը նախ համոզվում է, որ աշակերտը կամ նրա ծնողները ծանոթացել են հարցաթերթիկին ծանոթանալու կարգին:

- Հարցաթերթիկին ծանոթանալու ավարտից հետո ՇՔՀ աշխատակիցը նշում է դրա իրականացումը, իսկ աշակերտը կամ նրա ծնողները հաստատում են այն սեփական ստորագրությամբ:
- *Հարցաթերթիկի նշումների և նկարների ստուգումը:* Հարցաթերթիկին ծանոթանալու ընթացքում աշակերտը կամ նրա ծնողները կարող են ստուգել նշումները և նկարել հարցաթերթիկը:

7. Աշակերտը կամ նրա ծնողները կարող են դիմել միավորների գումարի ստուգման խնդրանքով, որի համար դիմումը և դիմումի հիմնավորումը պետք է ներկայացնել ՇՔՀ տնօրենին՝ հարցաթերթիկին ծանոթանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

8. Դիմումի ձևանմուշը հասանելի է *Ութերորդ դասարանի քննության կազմակերպման և անցկացման ձևի մասին ուղեցույցի* ԿՔՀ-ի կայքում հրապարակված Հանրային տեղեկագրի բաժնում:

9. Միավորների գումարի ստուգումը իրականացվում է դիմումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում:

10. Միավորների գումարի ստուգման համար ՇՔՀ-ի տնօրենը նշանակում է քննող, որը չի կարող լինել այն նույն անձը, ով ստուգել և գնահատել է հարցաթերթիկը և ում վերաբերում է դիմումը:

11. ՇՔՀ-ի տնօրենը գրավոր կերպով տեղեկացնում է աշակերտին կամ նրա ծնողներին միավորների գումարի ստուգման արդյունքների մասին՝ 7-րդ կետում նշված դիմումը ստանալուց հետո 14-օրյա ժամկետում:

12. Եթե իրականացված ստուգման արդյունքում միավորների գումարը ավելացվում է, ՇՔՀ-ի տնօրենը հաստատում է տվյալ առարկայի քննության նոր արդյունքը, չեղարկում նախորդ տեղեկանքը և տրամադրում Ութերորդ դասարանի քննության արդյունքների նոր տեղեկանք: Աշակերտը կամ նրա ծնողները պարտավոր են հանձնել չեղարկված փաստաթուղթը:

Խ. ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

1. Ութերորդ դասարանի քննությունում ներառված ամեն առարկայից պատրաստվել են ուղեցույցներ 2018/2019 ուս. տարվա համար: ԿՔՀ-ի և ՇՔՀ-ի ինտերնետային կայքերում հասանելի են՝

   - *2018/2019 ուս. տարվա Ութերորդ դասարանի քննություն* ***լեհերենից***
   - *2018/2019 ուս. տարվա Ութերորդ դասարանի քննություն* ***մաթեմատիկայից***
   - *2018/2019 ուս. տարվա Ութերորդ դասարանի քննություն* ***անգլերենից***
   - *2018/2019 ուս. տարվա Ութերորդ դասարանի քննություն* ***ֆրանսերենից***
   - *2018/2019 ուս. տարվա Ութերորդ դասարանի քննություն* ***իսպաներենից***
   - *2018/2019 ուս. տարվա Ութերորդ դասարանի քննություն* ***գերմաներենից***
   - *2018/2019 ուս. տարվա Ութերորդ դասարանի քննություն* ***ռուսերենից***
   - *2018/2019 ուս. տարվա Ութերորդ դասարանի քննություն* ***ուկրաիներենից***
   - *2018/2019 ուս. տարվա Ութերորդ դասարանի քննություն* ***իտալերենից*** [14]

2. Ութերորդ դասարանի քննության ուղեցույցներ պատրաստվել են նաև հաշմանդամ աշակերտների՝
   - կույր աշակերտների համար (ուռուցիկ ձևաչափով),
   - վատ լսող և խուլ աշակերտների համար,
   - թույլ մտավոր հետամնացություն ունեցող աշակերտների համար:

3. Հասանելի են նաև Ութերորդ դասարանի քննության ուղեցույցներ մաթեմատիկայից (սկսած 2020 թ. նաև կենսաբանությունից, քիմիայից, ֆիզիկայից, աշխարհագրությունից և պատմությունից)՝
   - ազգային փոքրամասնությունների լեզուներով՝ բելառուսերեն, եբրայերեն, լիտվերեն, գերմաներեն, հայերեն, սլովակերեն և ուկրաիներեն
   - էթնիկ փոքրամասնության լեզվով՝ լեմկերեն
   - բարբառային լեզվով՝ կաշուբերեն

4. Յուրաքանչյուր ուղեցույց պարունակում է տվյալ առարկայի քննության նկարագրություն և առաջադրանքների օրինակներ լուծումների հետ միասին:

5. Հարցաթերթիկներում կարող են տեղ գտնել առաջադրանքներ ընդհանուր կրթական ծրագրում նշված բոլոր պայմանների համաձայն, ինչպես նաև *Ուղեցույցում* նշված օրինակներից տարբերվող առաջադրանքներ: Ութերորդ դասարանի քննությանը պատրաստվելու միակ արդյունավետ տարբերակը տեղեկություններին և գիտելիքներին տիրապետումն է, որը թույլ կտա իրականացնել կրթական ծրագրի բոլոր պահանջները:

---

[14] 8-րդ դասարանի քննության մասին ուղեցույցներկենսաբանություն,քիմիա,ֆիզիկա,աշխարհագրություն և պատմություն առարկաներիցտրամադրվում են մինչև 2020թ. սեպտեմբերի 1-ը: (art. 267 ust. 2 pkt 1 ustawy z dnia 14 grudnia 2016 r. *Przepisy wprowadzające ustawę – Prawo oświatowe*).

Ծ. ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՑՈՒ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հարգելի՛ ծնող, համոզվիր, որ և Դու, և Քո երեխան ամբողջովին տիրապետում եք ստորև նշված տեղեկություններին: Այդ ամենի մասին կարելի է տեղեկանալ սույն հրապարակումից: Եթե ամեն դեպքում գտնում եք, որ լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեք, ապա խնդրում ենք դիմել դպրոցի տնօրենին, դասղեկին կամ խնդրում ենք կապվել համապատասխան շրջանային քննական հանձնաժողովի հետ:

Ութերորդ դասարանի քննությանը վերաբերող գլխավոր հարցերը՝

1. Գլխավոր և լրացուցիչ ժամկետներում քննության անցկացման գրաֆիկը՝ այդ թվում լրացուցիչ ժամկետում մասնակցության կարգը:

2. Քննության կառուցվածքը (տվյալ ուս. տարվա քննական առարկաները, յուրաքանչյուր առարկայի քննության տևողությունը՝ այդ թվում քննության պայմանների և ձևի հարմարեցման դեպքում ժամանակի երկարացումը) և ստուգվող գիտելիքների շրջանակը՝ ընդհանուր կրթական ծրագիրը:

3. Քննության անցկացման կարգը (ամեն օրվա քննության ընթացքը):

4. Հարցաթերթիկում պատասխանների նշման ձևը, ինչպես նաև լրացուցիչ ժամանակը (5 րոպե), որ նախատեսված է պատասխանները հարցաթերթիկ անցկացնելու ճշգրտման համար:

5. Արգելվում է հեռահաղորդակցման սարքեր ներս բերելը կամ դրանցից օգտվելը քննասենյակում:

6. Նյութեր և օժանդակ պարագաներ, որոնք աշակերտները կարող են տանել քննասենյակ:

7. Առաջադրանքների ինքնուրույն լուծման անհրաժեշտություն կամ այդ կարգին չհետևելու հետևանքները:

8. Ստուգված և գնահատված աշխատանքի վերանայման, ինչպես նաև միավորների գումարի ստուգման դիմում ներկայացնելու հնարավորություն:

Ժամկետներ, որոնք պետք է հիշել՝

մինչև սեպտեմբերի 30-ը	Դպրոցը պարտավոր է ծանոթացնել ծնողներին Ութերորդ դասարանի քննության անցկացման ձևի և հնարավոր հարմարեցումների հետ:
մինչև սեպտեմբերի 30-ը	Ծնողները պարտավոր են դպրոցի տնօրենին ներկայացնել գրավոր հայտարարություն՝ • Նշելով այն օտար լեզուն, որից աշակերտը հանձնելու է քննություն • նշելով այն ընտրովի առարկան, որից աշակերտը քննություն է հանձնելու (սկսած 2022 թ.) • տեղեկացնելով տվյալ ազգային կամ էթնիկ փոքրամասնության լեզվով կամ բարբառով մաթեմատիկայի քննությանը մասնակցության մտադրության մասին (իսկ սկսած 2022 թ. նաև ընտրովի առարկայի քննությանը):

մինչև հոկտեմբերի 15-ը	Ծնողները դպրոցի տնօրենին են ներկայացնում աշակերտի առողջության մասին տեղեկանք կամ հոգեբանա-մանկավարժական հանձնաժողովի գնահատականը, եթե նախկինում չէր ներկայացվել:
ոչ ուշ քան նոյեմբերի 20-ը[15]	Դպրոցը պարտավոր է ծնողներին գրավոր կերպով տեղեկացնել մանկավարժական խորհրդի կողմից նշված Ութերորդ դասարանի քննության անցկացման ձևի և պայմանների հարմարեցման հնարավորության մասին՝ քննություն հանձնողի կրթական և հոգեբանաֆիզիկական կարիքներին համապատասխան: Տեղեկությունը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ծնողները հայտարարում են քննության անցկացման պայմանների և ձևի հարմարեցման հնարավորությունից օգտվելու կամ չօգտվելու մասին:
մինչև հունվարի 15-ը[15]	Ծնողները գրավոր տեղեկացնում են մինչև սեպտեմբերի 30-ը ներկայացրած հայտարարության փոփոխության կամ փոփոխությունների մասին:
մինչև հունվարի 15-ը[15]	Դպրոցի տնօրենի հետ համաձայնեցված դիմումի ներկայացում՝ քննությունը այլ տեղում անցկացնելու մասին (տե՛ս *Ուղեցույցի* 1-ին բաժնի 6 կետը):
մինչև մարտի 30-ը[15]	Ծնողները դիմում են դպրոցի տնօրենին հայտարարված առարկան փոխելու խնդրանքով, որը վերաբերվում է այն աշակերտներին, ովքեր առարկայական օլիմպիադաների հաղթող կամ եզրափակչի մասնակից են կամ առարկայական մարզային կամ հանրապետական մրցույթների հաղթող են:
ապրիլի 2-րդ կես	Ութերորդ դասարանի քննության գլխավոր ժամկետ:
հունիսի 1-ին կես	Ութերորդ դասարանի քննության լրացուցիչ ժամկետ:
ուս. տարվա ավարտից մեկ շաբաթ առաջ	ՇՔՀ-ը դպրոցին է փոխանցում ութերորդ դասարանցու գնահատականները:
ուս. տարվա վերջին օրը	Տեղեկանքի հետ միասին աշակերտը ստանում է ութերորդ դասարանի քննության արդյունքների մասին վկայական:

Տվյալ ուս. տարում քննությունների կազմակերպման և անցկացման մասին հավելյալ տեղեկություններ, այդ թվում անհրաժեշտ փաստաթղթերի նմուշները, հասանելի են *Ութերորդ դասարանի քննության կազմակերպման և անցկացման ձևի մասին ուղեցույցում՝* Կենտրոնական քննական հանձնաժողովի ինտերնետային կայքի «Ութերորդ դասարանի քննություն» > «Ժամանակացույց, հաղորդագրություններ, տեղեկատվություն» բաժնում:

[15]Քննության անցկացման հստակ ժամկետը կախված է տվյալ ուս.տարվանից և հայտարարվում է տվյալ ուս.տարվա*8-րդ դասարանի քննության կազմակերպման և անցկացման ձևի մասին տեղեկատվության*մասին Հասարակական տեղեկագրի մեջ,որը հասանելի է ԿՔՀ-ի կայքում:

ԿՔՀ-ի ինտերնետային կայքում (www.cke.edu.pl) հասանելի են կամ կլինեն նաև՝

սկսած 2017թ. սեպտեմբերի 1-ից	Ութերորդ դասարանի քննության մասին ուղեցույցներ լեհերեն, մաթեմատիկա և օտար լեզու առարկաներից:
սկսած 2017թ. դեկտեմբերի 18-ից	Փորձնական քննական հարցեր/հարցատոմսեր լեհերեն, մաթեմատիկա և օտար լեզու առարկաներից:
սկսած 2018թ. դեկտեմբերի 21-ից	Փորձնական քննական հարցեր/հարցատոմսեր լեհերեն, մաթեմատիկա և օտար լեզու առարկաներից:
սկսած 2019 թ. վերջից	Հետագա տարիներին յուրաքանչյուր առարկայի անցկացման համար օգտագործվող քննական հարցեր/հարցատոմսեր:
սկսած 2020 թ. սեպտեմբերի 1-ից	Ութերորդ դասարանի քննության մասին ուղեցույցներ կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն և պատմություն առարկաներից:
սկսած 2020թ. դեկտեմբերի 18-ից	Փորձնական քննական հարցեր/հարցատոմսեր կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն և պատմություն առարկաներից:
սկսած 2021 թ. դեկտեմբերի 20-ից	Փորձնական քննական հարցեր/հարցատոմսեր կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն և պատմություն առարկաներից: